Դր. Մայքլ Քամբեք
Գլխավոր քարտուղար
Հեռախոս՝ +32 484 75 28 25
Էլ. փոստ՝ michael.kambeck@eufoa.org

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բրյուսել, 23 նոյեմբերի, 2010թ.

Հարցումը Հայաստանում լույս է սփռում ԵԱՀԿ-ի հանդեպ ընկալումների և այլ առանցքային քաղաքական հարցերի շուրջ

Այսօր **«Հայաստանի եվրոպացի բարեկամներ»** կազմակերպությունը (EuFoA, www.EuFoA.org) հրապարակում է *Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում սոցիալ-քաղաքական հարցերի և արտաքին հարաբերությունների շուրջ* միջազգային մակարդակով առաջին անգամ իրականացված *հանրային կարծիքի հարցման* հայաստանյան արդյունքները: Հայաստանյան հետազոտությունը ներառում է հարցեր Հայաստանի ներքին իրավիճակի, Թուրքիայի, Լեռնային Ղարաբաղի, Եվրամիության, ԵԱՀԿ-ի և Հայաստանի հետ առնչություն ունեցող այլ միջազգային կառույցների մասին:

«Մեր հետազոտությունն բացահայտում է մի շարք հետաքրքիր տվյալներ այն մասին, թե ինչպես է Հայաստանում ընկալվում միջազգային հանրությունը: Այն նաև ցույց է տալիս ներկայումս հայաստանցիների անվստահությունը Թուրքիայի նկատմամբ՝ հատկապես արձանագրությունների վավերացման հետ կապված խնդիրներից հետո: Բացի դրանից, հայաստանցիները մեծամասամբ կարծում են, որ իրենց երկիրը ճիշտ ուղղությամբ է ընթանում և կողմ են Լեռնային Ղարաբաղում հրադադարի ռեժիմի ամրապնդմանը՝ դիպուկահարների հեռացման և շփման գծի երկայնքով միջազգային դիտորդների տեղակայման միջոցով»,- մեկնաբանել է մեծ բրիտանական **«Պոպուլուս»** հանրային կարծիքի ուսումնասիրություններով զբաղվող ընկերության գործադիր տնօրեն **Էնդրյու Կուպերը** (www.populus.co.uk):

Այս հետազոտության հայաստանյան գործընկեր, **«Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի** (IPSC, www.ipsc.am) տնօրեն **Հովհաննես Գրիգորյանն** ավելացրել է. «Այս հետազոտության ընթացքում մեր կողմից ստացած սոցիոլոգիական տվյալները ոգեշնչող մանրամասներ հաղորդեցին, որոնք մինչև այդ հասանելի չէին: Մենք հուսով ենք, որ այս հետազոտության արդյունքները կօգնեն որոշում կայացնողներին և մամուլին ավելի լավ հասկանալ, թե ինչ է մտածում Հայաստանի բնակչությունը այս բավականին կարևոր քաղաքական հարցերի շուրջ»:

«Մեզ համար, մասնավորապես, զարմանալի էր տեսնել, թե որքան ցածր է Հայաստանի համար այդքան կարևոր ԵԱՀԿ Մինսկի խմբի մասին տեղեկացվածության մակարդակը: Հետազոտությունը նաև ցույց է տալիս հայաստանցիների դրական վերաբերմունքն այն միջոցների նկատմամբ, որոնք կարող են հանգեցնել Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը, ինչը սերտորեն կապված է նրանց անվստահության հետ այն միջոցառումների հետ, որոնք կարող են ազդել Հայաստանի բնակչության անվտանգության վրա: Այս և մի շարք այլ հարցեր չափազանց հետաքրքիր կլինեն Աստանայում կայանալիք ԵԱՀԿ-ի գագաթնաժողովի համար», - եզրակացրել է **«Հայաստանի եվրոպացի բարեկամներ»** կազմակերպության գլխավոր քարտուղար դր. **Մայքլ Քամբեքը**:

Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացվել են 2010 թ.-ի հոկտեմբերի 15-18-ը դեմ առ դեմ կատարված 1208 հարցազրույցների միջոցով Հայաստանի բոլոր մարզերում և Երևանում: Սահմանային սխալը կազմում է 2.87%:

Ստորև ներկայացված է հանրային կարծիքի հարցման արդյունքների համառոտ ամփոփումը: Ամբողջական զեկույցը գծապատկերներով այսօրվանից հասանելի է www.eufoa.org կայքում:

Լեռնային Ղարաբաղում անցկացված հանրային կարծիքի հարցումը

կտպագրվի հինգշաբթի՝ 2010թ.-ի նոյեմբերի 25-ին:

«Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպությունը սիրով կտրամադրի մեկնաբանություններ կամ անհրաժեշտ վերլուծություններ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով: Եվրոպա-Հայաստան խորհրդի անդամները նույնպես պատրաստակամ են մեկնաբանություններ տրամադրել: Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել մեր քարտուղարություն:

«Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության և Եվրոպա-Հայաստան խորհրդի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել մեր կայք՝ www.EuFoA.org.

Լուսանկարները հասանելի են մեր կայքում, ինչպես նաև կտրամադրվեն ըստ պահանջի: Հեղինակային իրավունքի սահմաններում նկարների օգտագործումը թույլատրվում է: Օգտագործումն անվճար է, «Copyright: www.EuFoA.org» նշելը՝ պարտադիր:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, ՆՈՅԵՄԲԵՐ 2010թ.
ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի ներքին իրավիճակը

Հայաստանցիները հիմնականում դրական են վերաբերվում իրենց երկրի ընթացքին, սակայն, նախագահ Սարգսյանին մեծապես աջակցելու հետ մեկտեղ, նրանք պակաս դրական վերաբերմունք են ցուցաբերում քաղաքական իշխանությանն ընդհանրապես: Հայաստանցիների ուղիղ կեսը կարծում է, որ երկրի զարգացումն ընթանում է ճիշտ ուղղությամբ, և միայն մեկ երրորդն է այն կարծիքին, որ այն ընթանում է սխալ ուղղությամբ, և այս պնդումը ճիշտ է ժողովրդագրական բոլոր խմբերին պատկանող մարդկանց մեծամասնության համար: Սա դրական արդյունք է՝ ի համեմատություն բազմաթիվ այլ երկրների հետ. ԱՄՆ-ում, օրինակ, հարցվողների մեկ երրորդից էլ քիչ մասն է այն կարծիքին, որ երկրի զարգացումն ընթանում է ճիշտ ուղղությամբ, իսկ Մեծ Բրիտանիայում՝ 40%-ից էլ պակասը:

Այսպիսի դրական արդյունքի հիմնական պատճառը հատկանշական բարեփոխումներն են, որոնք հայաստանցիների կարծիքով տեղի են ունեցել վերջին հինգ տարիների ընթացքում: Մասնավորապես՝ հարցվողները կարծում են, որ Հայաստանում զարգացել են ենթակառուցվածքները, անվտանգությունն ու կրթությունը. ընդհանուր առմամբ նրանք կարծում են, որ կյանքի որակը հինգ տարիների ընթացքում համեստորեն բարելավվել է: Այնուամենայնիվ, նրանք այն կարծիքին են, որ սահմանափակ առաջընթաց է տեղի ունեցել ժողովրդավարության կայացման գործում, և գրեթե ոչ մի առաջընթաց՝ կոռուպցիայի դեմ պայքարի հարցում: Գլոբալ ֆինանսական ճգնաժամի պայմաններում՝ նրանք նաև այն համոզման են, որ տնտեսության մեջ նույնպես քիչ առաջընթաց է արձանագրվել: Քանի որ գործազրկությունը ՀՀ բնակչությանն ամենաշատը հուզող խնդիրն է, այն համոզմունքը, որ երկրի տնտեսությունը վերջին տասը տարիների ընթացքում այնքան էլ չի զարգացել, հիմնված է նրա վրա, որ հայաստանցիների մեկ քառորդը կարծում է, որ երկրի իշխանությունն ընդհանրապես չի ներկայացնում իրենց շահերը, իսկ 59%-ը կարծում է, որ այն միայն որոշ չափով է ներկայացնում դրանք:

Սերժ Սարգսյանը մնում է այն քաղաքական գործիչը, ում օգտին առավելագույնը կքվեարկեին, եթե կրկին նախագահական ընտրություններ լինեին: Նա գրեթե երեք անգամ ավելի շատ կողմնակիցներ ունի (28%), քան հաջորդ առավել ուժեղ հնարավոր թեկնածուն՝ Գագիկ Ծառուկյանը (10%): Ընդ որում, բոլոր տարիքային խմբերին պատկանող հարցվողների մեծամասնությունն ասում է, որ իր ձայնը կտա հենց Ս. Սարգսյանին, թեև նա ավելի շատ կողմնակիցներ ունի մեծահասակների, քան երիտասարդների շրջանում: Այնուամենայնիվ, չնայած նախագահ Սարգսյանն ամենաշատ կողմնակիցներ ունեցող քաղաքական գործիչն է, շատերը նշում են, որ չգիտեն, թե ում կտային իրենց ձայնը, կամ որ ոչ մեկին օգտին էլ չէին քվեարկի (միասին վերցրած՝ այսպես է նշում բնակչության մեկ երրորդից ավելին):

Սերժ Սարգսյանն, այնուամենայնիվ, ավելի շատ կողմնակիցներ ունի, քան իր կուսակցությունը, ինչը բնորոշ է տարբեր երկրների շատ ղեկավարներին: Բնակչության փոքր-ինչ ավելի մեծ մասն ասում է, որ խորհրդարանական ընտրություններում իր առաջին ընտրությունը «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն է (26%), և հետո միայն՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (21%): Հանրապետական կուսակցության կողմնակիցների թիվը հավասարապես է բաշխված տարբեր տարիքային խմբերի միջև, մինչդեռ «Բարգավաճ Հայաստանի»

կողմնակիցներն ավելի շատ երիտասարդներ են, քան մեծահասակներ, և ավելի ցածր կրթությամբ մարդիկ, մինչդեռ նրանք, ովքեր բարձրագույն կրթություն ունեն, ավելի շուտ կքվեարկեն Հայաստանի հանրապետական կուսակցության օգտին: Հարցվողների 7%-ը իրենց ձայնը կտա Հայ հեղափոխական դաշնակցությանը, 4%-ը՝ «Օրինաց երկիր» կուսակցությանը, և 3%-ը՝ Հայ ազգային կոնգրեսին:

Կան նաև որոշ քաղաքական գործիչներ ու կուսակցություններ, որոնց բնակչության որոշ հատված երբեք ձայն չէր տա: Հարցվողների քառորդից ավելին (27%) ասում է, որ երբեք չի քվեարկի Լևոն Տեր-Պետրոսյանի օգտին: 13%-ը նշում է, որ երբեք չի քվեարկի Արթուր Բաղդասարյանի օգտին, նույնքան էլ չի քվեարկի Սերժ Սարգսյանի օգտին: Հարցվողների հինգերորդ մասից քիչ պակասը ձայն չէր տա «Օրինաց երկիր» կուսակցությանը, 13%-ը՝ Հայ ազգային կոնգրեսին, իսկ 10%-ն ասում է, որ ձայն չէր տա Հայաստանի հանրապետական կուսակցությանը, նույնքան էլ՝ Հայ հեղափոխական դաշնակցությանը: Ի համեմատություն, միայն 3%-ն է ասում, որ երբեք ձայն չի տա «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, ինչը զարմանալիորեն փոքր թիվ է:

Թուրքիա

Հետևելով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման շուրջ ընթացող վերջին 12 ամիսների դեպքերին՝ կարելի է ասել, որ հայաստանաբնակները շատ քիչ վստահություն ունեն Թուրքիայի՝ որպես երկրի, և թուրքերի նկատմամբ: Նրանք մեծ հավանություն են տալիս (75%-ը 19%-ի դեմ) Հայաստանի նախագահի որոշմանը՝ սառեցնել հայ-թուրքական հարաբերությունները այն բանից հետո, երբ Թուրքիան չվավերացրեց արձանագրությունները: Շատերը համաձայն են նախագահի այս որոշման հետ, քանի որ, ըստ նրանց, Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը գրեթե անհնար է: Հարցվողների մեծամասնությունն ասում է, որ անձամբ երբեք չի ակնկալել, որ Թուրքիան ավարտին կհասցնի հարաբերությունների կարգավորման գործընթացը, և կարծում է, որ արձանագրությունների վավերացման ընթացքում ծագած դժվարությունները պարզապես պատրվակ էին դա չանելու համար: Ի դեմս Թուրքիայում միջազգայնորեն արձանագրված ժողովրդավարացման գործընթացին և Թուրքիայի, այսպես կոչված, հարևանների հետ «զրոյական խնդիրների» քաղաքականության՝ ՀՀ քաղաքացիները խիստ համոզված են, որ Թուրքիան Հայաստանի համար չի դարձել ավելի վստահելի հարևան և ոչ էլ ավելի բարեկամական վերաբերմունք է ցուցաբերում, քան հինգ տարի առաջ:

Այնուամենայնիվ, թեև ՀՀ բնակչությունը բավականին կասկածանքով է վերաբերվում Թուրքիային և թուրքերին, մարդիկ նաև կարծում են, որ հարաբերությունների հաջողված կարգավորումն իսկապես շահավետ կլինի: Հարցվողների ճնշող մեծամասնությունը (78%) կարծում է, որ Հայաստանի տնտեսությունը կշահի միջազգային առևտրից, իսկ բացահայտ մեծամասնությունը կարծում է, որ դա ավելի մեծ հնարավորություններ կտա Հայաստանի արտաքին քաղաքականության համար (61%), և բաց սահմանը Հայաստանն ավելի կմոտեցնի Եվրոպային (63%): Դեռևս մեծ կասկած կա այն առավելությունների վերաբերյալ, որոնք ի հայտ կգան հենց Թուրքիայի հետ հարաբերություններում, քանի որ շատ քչերն են համոզված, որ Թուրքիան ավելի լավ գործընկեր կդառնա Հայաստանի համար տարածաշրջանային համագործակցության շրջանակներում, կամ որ Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանության ընդունումը ավելի հավանական կդառնա, իսկ մարդկանց մեծամասնությունը կարծում է, որ բաց սահմանը կբերի թրաֆիքինգի ու արտագաղթի տարածմանը (համապատասխանաբար՝ 75% և 71%):

Լեռնային Ղարաբաղ

Հետազոտության ընթացքում հարցեր են տրվել ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման հնարավոր բաղադրիչների մասին: Հայաստանաբնակները դրական են վերաբերվում այն տարբերակներին, որոնք, նրանց կարծիքով, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին մոտ պահելու

հետ մեկտեղ կօգնեն խաղաղության պահպանմանը, սակայն կտրականապես դեմ են Ադրբեջանին որևէ զիջում անելուն:

Հակամարտության կարգավորման գործընթացի ներկայիս փուլի մասին իրազեկության մակարդակը բնակչության տարբեր խմբերի միջև զգալիորեն տատանվում է: Տղամարդիկ և ավելի բարձր կրթությամբ հարցվողների մեծամասնությունը հայտնում է, որ ամբողջությամբ կամ մասամբ է տեղեկացված կարգավորման գործընթացի ներկայիս փուլի մասին, սակայն երիտասարդների, կանանց ու միջնակարգ և ավելի ցածր կրթություն ունեցողների մեծամասնությունն ասում է, որ հիմնականում վատ է տեղեկացված կամ ընդհանրապես տեղեկացված չէ: Իրազեկության բացակայությունն ակնհայտ է դառնում այն բանից, որ Հայաստանի բնակչության գրեթե կեսը չկարողացավ նշել հակամարտության հնարավոր խաղաղ կարգավորման և ոչ մի բաղադրիչ:

Թեև շատերը բաց հարցի պարագայում չկարողացան նշել հակամարտության հնարավոր խաղաղ կարգավորման բաղադրիչների մասին, այնուամենայնիվ, երբ հարցման ընթացքում նրանց ներկայացվեցին ներկայումս քննարկվող տարբերակները, պարզվեց, որ հարցվողները դրանց մասին լավ պատկերացում ունեն: Հայաստանաբնակները մեծապես կողմ են այն բաղադրիչներին, որոնք կերաշխավորեն Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին միացված լինելը, ինչպես օրինակ՝ երկու երկրները միացնող միջանցքի առկայությունը (այս բաղադրիչը նախընտրելու ցուցանիշը 10 բալանոց սանդղակով միջինում 7.95 է), և կտրականապես դեմ են այն բաղադրիչներին, որոնք դիտարկվում են որպես մեծ զիջում Ադրբեջանին, հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի շրջակա տարածքների հանձնումը Ադրբեջանին (1.55՝ 10 բալանոց սանդղակով), անգամ այն դեպքում, եթե դա հակամարտության համակողմանի խաղաղ կարգավորման մաս լինի և ադրբեջանական զինված ուժերի մուտքը այդ տարածքներ արգելված լինի:

Հետաքրքրական է, որ հարցվողները չեն ժխտում բոլոր միջոցները: Նրանք, կարծես, ձգտում են խաղաղության և բավականին դրական են վերաբերվում այն միջոցներին, որոնք, իրենց կարծիքով, կօգնեն հակամարտության կարգավորմանը, սակայն առանց մեծ զիջումների, ինչպես օրինակ՝ հրադադարի ռեժիմի ամրապնդումը և փոխվստահության միջավայրի ստեղծումը՝ խաղաղության հաստատման բանակցությունների հետագա առաջընթացի ավելի ամուր հիմք ստեղծելու համար (համապատասխանաբար՝ 6.72 և 6.47 միավոր 10 բալանոց սանդղակով): Նրանք նաև կողմնակից են միջազգային անվտանգության երաշխիքներին, որոնք ներառում են խաղաղապահ գործողություններ (6.43 միավոր 10 բալանոց սանդղակով) և Լեռնային Ղարաբաղին միջանկյալ կարգավիճակի տրամադրում՝ անվտանգության և ինքնավարության երաշխավորման պայմանով (5.62 միավոր 10 բալանոց սանդղակով), այնքանով, որքանով որ դրանք հակամարտության համակողմանի խաղաղ կարգավորման մաս են կազմում:

Հայաստանի և Ադրբեջանի միջև կնքված ժամանակավոր հրադադարի ռեժիմի ամրապնդման, այսինքն՝ դիպուկահարների հեռացման և շփման գծի երկայնքով միջազգային դիտորդների տեղակայման կողմնակիցների թիվը Հայաստանում բարձր է (երկրորդ առավել նախընտրելի տարբերակն է. 6.72 միավոր 10 բալանոց սանդղակով): Հարցվողները մեծապես համոզված են, որ դա կնվազեցնի հայ և ադրբեջանցի զոհերի թիվը շփման գծում (71%), կնվազեցնի պատերազմի վտանգը (64%) և կհեշտացնի ԵԱՀԿ-ի՝ խաղաղության բանակցությունների գործընթացը (66%):

ԵԱՀԿ

Զարմանալի է հայաստանաբնակների վերաբերմունքը ԵԱՀԿ Մինսկի խմբի հանդեպ, որը, դժվար թե ավելի անբարենպաստ լիներ:

Խմբի գործողությունների մասին իրազեկության մակարդակը զգալիորեն ցածր է. Հարցման մասնակիցների միայն 5%-ն է ասել, որ լիովին տեղեկացված է, և հազիվ մեկ երրորդը որևէ պատկերացում ունի դրանց մասին: Հարցվողների միայն մեկ քառորդն է կարծում, որ ԵԱՀԿ

Մինսկի խումբն աջակցում է Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին, և մեկ հինգերորդից էլ պակաս մասն է վստահում խմբին:

Հինգ հարցվողներից երկուսից էլ քիչն է (38%) կարծում, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը դեր ունի Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում և, ինչն ամենաանբարենպաստն է, քառորդից քչերն են կարծում, որ ԵԱՀԿ Մինսկի խումբն այն երկրներից կամ միջազգային կազմակերպություններից մեկն է, որին հետաքրքրում է հակամարտության խաղաղ կարգավորումը՝ չնայած այն փաստին, որ հենց դա է ԵԱՀԿ Մինսկի խմբի գործողությունների հիմնական առաքելությունը: Ի հակադրություն սրան՝ ավելի շատ հարցվողներ են կարծում, որ Մինսկի խմբի համանախագահող երկրներից Ռուսաստանը և Ֆրանսիան հետաքրքրված են հակամարտության խաղաղ կարգավորման մեջ:

ԵԱՀԿ Մինսկի խումբը, անկասկած, չի կարողացել ճիշտ ներկայացնել ՀՀ բնակչությանը իր դերն ու նշանակությունը հակամարտության կարգավորման գործընթացում, այնուամենայնիվ հստակ չէ, թե արդյո՞ք սրա պատճառները ավելի շուտ ԵԱՀԿ-ով, թե ներքին կամ այլ գործոններով են պայմանավորված:

Ռուսաստան

Ի տարբերություն ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ Ռուսաստանի հանդեպ ընկալումը հարցվողների մոտ բացառապես դրական է. Ռուսաստանը հայաստանցիների կողմից լայնորեն դիտարկվում է որպես մի շատ կարևոր ու արժեքավոր երկիր, թեև պետք է նաև հաշվի առնել, որ հետազոտության ընթացքում բացահայտված Ռուսաստանի հանդեպ այդ բարենպաստ հայացքները որոշ չափով պայմանավորված են ՌԴ նախագահ Մեդվեդևի՝ վերջերս Հայաստան կատարած պետական այցով:

Ռուսաստանը, մեծ հաշվով, Հայաստանում ամենավստահելի արտաքին ուժն է. հարցվողների 80%-ը վստահում է Ռուսաստանին, ինչը գրեթե կրկնակի անգամ ավելի շատ է, քան վստահություն վայելող երկրորդ երկիրը (42%-ը վստահում է Ֆրանսիային): Ռուսաստանը նաև դիտարկվում է որպես Հայաստանին մեծապես աջակցող երկիր. այսպես է կարծում հայաստանցիների 71%-ը, 43%-ն էլ նույն կարծիքին է Ֆրանսիայի մասին: Ռուսաստանի հանդեպ դրական վերաբերմունքը տարածվում է նաև արժեքային համակարգի վրա. հարցվողների գրեթե կեսն ասում է, որ նրանք կնախընտրեին, որ Հայաստանի արժեքային համակարգը մոտ լիներ ռուսականին: Հատկապես մեծահասակներն ասում են, որ կնախընտրեին ռուսական արժեքային համակարգը, միչդեռ երիտասարդներն ավելի շատ նախընտրում են եվրոպական արժեհամակարգը: Երիտասարդներն, այնուամենայնիվ, բոլոր երկրներից ու միջազգային կառույցներից ամենաշատը դրական են վերաբերվում Ռուսաստանին, թեև նախընտրում են եվրոպական արժեքները:

Հայաստանցիների 85%-ը Ռուսաստանը դիտարկում է որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում կարևոր դեր ունեցող միջնորդ, շատ ավելի կարևոր, քան որևէ այլ երկիր կամ միջազգային կազմակերպություն, և վերաբերվում է Ռուսաստանին որպես հակամարտության կարգավորմանը ձգտող ամենաշահագրգռված երկիր:

Եվրամիություն

Եվրամիության հանդեպ վերաբերմունքն ավելի քիչ դրական է, քան Ռուսաստանի հանդեպ, որոշ դեպքերում նույնիսկ այնքան բացասական, որքան ԵԱՀԿ Մինսկի խմբի հանդեպ: Հայաստանաբնակները Եվրամիությունը դիտարկում են որպես ոչ ավել, քան երկրորդական գործիչ տարածաշրջանային հարցերում: Հարցվողների մեկ քառորդից էլ պակաս մասն է հայտնում, որ դա այն կազմակերպություններից է, որին ամենաշատն է վստահում, և միայն մեկ հինգերորդն է ասում, որ դա այն կազմակերպությունն է, որն ամենաշատն է աջակցում Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին: Մեկ քառորդից մի փոքր ավելին կարծում են, որ Եվրամիությունը դեր ունի

հակամարտության կարգավորման գործընթացում և դեռ ավելի քիչ մասն էլ կարծում է, որ այն առավել շահագրգռված է խաղաղության պահպանման մեջ:

ՀՀ քաղաքացիները կողմ կլինեն Եվրամիության մասնակցությանը հակամարտության կարգավորման գործընթացին այն դեպքում, երբ այն կարողանա օգնել խաղաղության ամրապնդման գործընթացին: Կա ուժեղ աջակցություն ԵՄ գործողություններին, որոնք կարող էին զուգորդվել ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում բանակցությունների հետ, ինչպես օրինակ՝ ԵՄ ոչ ռազմական դիտորդական առաքելությունը, հակառակորդ կողմերի միջև ժողովրդավարություն ամրապնդելու միջոցով հակամարտության խաղաղ կարգավորման համար ԵՄ պարտավորությունների ավելացումը, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև հրադադարի ռեժիմի ամրապնդման համաձայնության ձեռքբերումը: Այնուամենայնիվ, բնակչության մեծամասնությունն այս գործողություններին դրական է վերաբերվում ոչ այն բանի համար, որ դրանք արվում են Եվրամիության կողմից, այլ որովհետև այդ գործողություններն ինքնին դրական են. խաղաղապահ առաքելությունը, հրադադարի ռեժիմի և ժողովրդավարության ամրապնդումը լավ են ընդունվում հարցվողների կողմից, անկախ այն բանից, թե ով կնախաձեռնի դրանք: Այն հանգամանքը, որ միայն փոքրամասնությունն է այն կարծիքին, որ Եվրամիությունը շահագրգռված է խաղաղության պահպանման մեջ կամ դեր ունի հակամարտության կարգավորման գործընթացում, հիմք է տալիս ենթադրելու, որ ՀՀ բնակչությունը չի հավատում Եվրամիությանը և կարծում է, որ Եվրամիությունը ոչ ցանկություն ունի և ոչ էլ ունակություն դրանք իրականացնելու: